

ՓԱՌԱՆԶԵՄ ՄԵՅԹԻԿԱՆՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանաստեղծության լեզուն լայն քննության առարկա է դարձել ամենատարբեր տեսանկյուններից, բայց մինչև այժմ ոչ միայն հայ, այլև ռուս և համաշխարհային գրականության մեջ որոշակի քննություն չի կատարվել հատուկ անունների՝ բանաստեղծական լեզվում խաղացած ու կատարած բացառիկ կարևոր դերի տեսանկյունից¹: Բանաստեղծական խոսքում սփռված հազարավոր հատուկ անունները լուրջ ուսումնասիրման ու դասակարգման խիստ կարիք ունեն ամենատարբեր կողմերից: Բանաստեղծական լեզվի լեզվական նորմայի բաղկացուցիչ մասն է կազմում անշուշտ չափածոյի անվանաբանական նորման, որը, շատ ընդհանրություններ ունենալով ընդհանրապես լեզվի անվանաբանական նորմայի հետ, հանդես է բերում բազում այլ առանձնահատկություններ, տարբերություններ. այն, ինչ հատուկ անուն է համարվում բանաստեղծական լեզվում, հասարակ անուն է լեզվի անվանաբանական նորմայի տեսանկյունից: Ուստի ի՞նչ դեր ունի բանաստեղծական լեզվի անվանաբանական նորման լեզվական նորմայի մեջ: Հայ բանաստեղծության մեջ գործածված անունների ամբողջության մեջ ո՞ր մասն են կազմում ընդհանուր չափանիշներով հատուկ անուն /անձնանուն կամ տեղանուն/ համարվողները, իսկ ո՞ր մասը, այսպես կոչված, բանաստեղծականը: Անունների այդ ամբողջությունը ի՞նչ եզրաբանության մեջ է

¹ 1.В.П.Григорьев,Ономастика Велимира Хлебникова (индивидуальная поэтическая норма),в кн. Ономастика и норма, Академия наук СССР, Москва,1976, 2.Е.А.Некрасова,Некоторые наблюдения над употреблением имен собственных в произведениях А.Вознесенского в кн. Ономастика и норма.

տեղավորվում կամ ի՞նչ եզրաքանությունից է օգտվում: Սրանք և սրանց նման բազմաթիվ հարցեր սպասում են իրենց պարզաբանմանը:

Հատուկ անունների մեջ իրենց առանձնակի տեղն ունեն աստվածաշնչյան անունները, որոնք, ըստ բանաստեղծական գործածությունների, կարելի է ներկայացնել հետևյալ տերմինային համակարգմամբ.

Ա.Հատուկ անուն

Աստվածաշնչյան հատուկ անուններն իրենց մեջ ներառում են երկու մեծ խումբ
ա/ Անձնանուններ

Որպես անձնանուններ են ներկայացվում՝

1. Արական և իգական բոլոր այն անունները, որ կրել են Աստվածաշնչի անձինք, ինչպես՝ *Ադամ, Եվա, Նոյ, Աբրահամ, Ազարիա, Դանիել, Բաղդասար, Ենոք, Հակոբ, Ռուբեն, Բենիամին, Ռաբել, Մարիամ, Եղիսաբեթ, Ղուկաս, Մատթեոս* և այլն:

2. Աստվածների անունները, նրանց անունների տարընթերցումները՝ *Եհովա /Եուվա, Յահվե/, Հիսուս Քրիստոս, Էմմանուել, Սանուել* :

3. Հայ բանաստեղծության մեջ հանդիպող բոլոր կուռքերի անունները, ինչպես՝ *Աստարտ, Բահաղ, Բեհեզզեբուղ, Բելիար, Մեղքոմ, Սողոք,Քամուկ, Քևան, Փագուկր* և այլն:

բ/ Տեղանուններ

Որպես տեղանուններ են ներկայացվում՝

1. Պետությունների, քաղաքների, գյուղերի այն անունները, որոնք թեկուզ մեկ անգամ գործածված են Աստվածաշնչում, ինչպես՝ *Արաբիա, Բաբելոն, Գալիլեա, Իսրայել, Պաղեստին, Եգիպտոս, Բեթղեհեմ, Երուսաղեմ, Կանա, Մովաբ, Նազարեթ, Սաբա, Թեման, Քանան* և այլն: Ինչպես երևում է օրինակներից, դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ բուն աստվածաշնչյան և Աստվածաշնչում հանդիպող:

2. Գետերի, ծովերի, լճերի, հեղեղատների, աղբյուրների անունները, ինչպես՝ *Եփրատ, Կեդրոն, Հորրոդանան, Բեթիեզդա, Մեռա, Կարմիր ծով, Տիգրիս, Սովրեկ* և այլն:

3. Լեռների, դաշտերի, հովիտների, բլուրների անունները, ինչպես՝ *Արարատ, Արաբովթ, Բեթել, Գաղաադ, Գարիզին, Հիթենյաց լեռ, Հորդանան,*

Սովաք, Նաբալ և այլն:

4. Սրբավայր-տեղանունները՝ վանքերի, տաճարների, եկեղեցիների անունները, ինչպես՝ *ս.Աննայի վանք, ս.Չակոբի վանք, ս.Չարության վանք, ս.Աստվածածին վանք, ս.Էջմիածին* և այլն:

5. Այն տեղանունները, որոնք Աստվածաշնչում գործածված են և՛ հատուկ, և՛ հասարակ նշանակությամբ, նույն կերպ՝ բանաստեղծության մեջ, ինչպես *Եդեմ, Գեհեն*:

Բ./ Չատուկ անվանումներ²

Սրանք նախ և առաջ Սուրբ գրքի և նրա մեջ մտնող գրքերի վերնագրերն են, ինչպես՝ *Աստվածաշունչ, Ավետարան, Ծննդոց, Երգ երգոց, Սաղմոսաց գիրք* և այլն: Բացի դա, հատուկ անվանումները իրենց մեջ ներառում են երկու մեծ խումբ՝

ա/ Սականուններ

1. Սրանք վերադիր անուններ են, որ կցվում են որևէ անձնանվան՝ դառնալով նրա համար մի տեսակ երկրորդ անուն, ինչպես՝ *Աստվածածին, Տիրամայր, Տիրածին /Սարիամ/, Աստվածորդի /Բիսուս/, Երանելի /Բոբ/, Սկրտիչ, Կարապետ /Յովհաննես/, Տեառնեղբայր /Չակոբ/ և այլն:*

2. Սականունների մի տեսակ են տեղանուններից առաջացած վերադիր անունները, որոնք այսօր էլ ընկալվում են որպես հատուկ, ինչպես՝ *Արիմաթացի /Յովսեփ/, Իսկարիոթացի /Բուդա/, Նազովրեցի /Բիսուս/, Մազբաղենացի /Սարիամ/, Տարսոնեցի /Պողոս/ և այլն:*

3. Սականունների այն տեսակը, որը տվյալ երկրի բնակիչ լինելն է ակնարկում կամ տվյալ երկրի ժողովրդին, ինչպես՝ *գերգեսացի, եբուսացի, եբրայեցի, եգիպտացի, հագարացի* և այլն: Սրանք, ինչ խոսք, այսօրվա անվանաբանական նորմայով հատուկ անուն այլևս չեն համարվում:

4. Սականունների մի տեսակ պետք է համարել ազգանունները, ինչպես՝ *Ահարոնյան, Աբրահամյան, Գաբրիելյան, Դավթյան, Իսրայելյան, Չաբեթյան*, որոնք բանաստեղծական բնագրերում արտահայտում են ոչ միայն ազգանվան նշանակություն:

² Չատուկ անվանումների մասին մանրամասն տես Չ.Բաբսեդյան, *Չատուկ անուն, տեսական նկարագրական ակնարկ*, Երևան, 1964, էջ 56-61:

բ/ Ոճանուններ

Սրանք այն հասարակ անուններն են, որոնք տվյալ բանաստեղծի կամ բանաստեղծների համար ստացել են առանձնահատուկ իմաստ՝ դրսևորվող միայն տվյալ ստեղծագործության մեջ, և ներկայացվել որպես հատուկ³: Այս դեպքում սրանք և՛ բառեր են, և՛ բառակապակցություններ, ինչպես՝ *Աղոթք, Սուրբ, Անկեզ մորենի, Կենաց ծառ, Նոյյան տապան, Տապան, Ջրհեղեղ* և այլն:

5-20-րդ դարերը իրենց մեջ ամփոփում են մի հսկայական ժամանակահատված, ուստի բնական է, որ անունների բավական զգալի մասը պետք է ունենային տարընթերցումներ՝ կապված տվյալ բանաստեղծի լեզվի որ տարբերակով /գրաբար, միջին հայերեն, արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառ/ ստեղծագործելու հետ: Այսպես՝ *Բաբելոն* անվան բանաստեղծություններում հանդիպող տարընթերցումներն են *Բաբել, Բաբելովն, Բաբիլոն, Բաբիլովն, Բաբիղոն, Պապիլոն*: Ըստ Աստվածաշնչի՝ *Բաբելոն* /Դ Թագ.Ժ 24, 50, Ա Սնաց.Թ 1.../ և *Բաբելովն* /Ես.Ժ 9,ԺԳ 19...,Սիք.Դ 10.../: Անունը բխեցվում է եբրայերեն *բալալ* բայից, որ նշանակում է *խառնել, խառնաշփոթել*: Ուստի *Բաբելոն* անունը նշանակում է *անկարգություն, անկանոնություն, իրարանցում, խառնաշփոթություն, քաոս* /ԲՅԱ,41/: Այս ստուգաբանությունը բխեցվում է հենց Աստվածաշնչից. «Վասն այնորիկ կոչեցաւ անուն մորա խառնակութիւն Եբր. Բաբել/, զի անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի, եւ անտիցրուեաց զնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի»/Ծննդ.ԺԱ 6-9/:Ըստ մեկ այլ կարծիքի՝ *Բաբելոն* նշանակում է *Աստծու դարպաս*.«ДЛЯ ВАВИЛОНЯИ название города означало ворота Бога, а не смешение»: /НЖБ,28/ :

Գ.Նարեկացին գրում է.

*Եւ զանհրաւութիւն Բաբելոնի
Տաղտկալի քեզ երեւեցի:*

Ըստ Ֆրիկի՝

*Կու հրամայէ մեծըն Դաւիթ
Ժողովդեան Բաբիլոնին...*

Գրիգոր Տղան գործածում է *Բաբել* տարբերակը.

³ Ոճանունների մասին մանրամասն տե՛ս Փ.Սեյիխանյան, *Պատուկ անունները և ոճանունները չափածոյում*, Երևան, Նորք, դ1, 2000, էջ 169-175:

Խառնակեսցին ըստ Բաբելին...

Արևմտահայ բանաստեղծ Ռուբեն Սևակը, բնականաբար, պետք է գործածեր *Պապիլոն*-ը.

Ամմահ Պապիլոն լռեց հավիտյան...

Երուսաղեմ անվան՝ բանաստեղծություններում հանդիպող տարընթե-
րցումներից են՝ *Երուսաղեմ, Երուսաղեմ, Սաղեմ, Սաղիմ* : Ըստ Աստվածաշնչի՝
Աբրահամ նահապետի ժամանակ կոչվել է *Սաղիմ* /Ծննդ.ԺԴ 18/, հետո *Եբուս* ,
իսկ բնակիչները՝ *եբուսացի*։ Որ *Եբուս*-ը *Երուսաղեմ*-ն է , հաստատվում է հենց
Աստվածաշնչով. «*եւ այս սահմանը վեր է ելնում Ենովմի որդիի ձորը՝
հարավային կողմիցը Յեբուսի մօտ՝ այսինքն Երուսաղեմի մօտ...*» /Բեսու Ժե
8,28/։ Աշխարհագրագետները ենթադրում են, որ հետագայում *Եբուս* և *Սաղիմ*
բառերից կազմվել է *Երուսաղեմ* բաղդությունը, որ եբրայերեն *Երուշալայիմ* /
նշանակում է «տեսութիւն խաղաղութեան կամ խաղարարարի »/ԲՀԼ,2,91/։
Ըստ Աստվածաշնչի՝ Երուսաղեմն ընտրյալ է եղել դեռ մինչև Աբրահամի
ծնունդը, որտեղ թագավորում էր Մելքիսեդեկը։ Քանանի հարավային մասում
գտնվող այս քաղաքը, Դավթի կողմից նվաճվելով, կոչվել է *Դավթի քաղաք* /Բ
Մնաց.Գ 1/։ Հայ բանաստեղծները այդպիսի գործածությունները անպայմա-
նորեն հաստատում են հենց *Երուսաղեմ*ով.

Քաղաք Դավթի, Երուսաղեմ...

/Գ. Տղա, ԲՊ, էջ 286/

*Երկոտասան հազար զորօք
գնացեալ հասին քաղաք Դաւթին ,
Հարիւրեցաւ Երուսաղեմ »:*

/Ա. Ջուղայեցի, ՌԽԲ, հ 1, էջ 293/

Լինելով մեծ սրբատեղի և ակնկալվող փրկության ավետավայր՝ դեռևս
հին ժամանակներից Երուսաղեմը այն ամենի խորհրդանիշն է, ինչ վսեմ է,
սրբազան ու փառավոր, ուստի և ներշնչանքի անսպառ աղբյուր հայ
բանաստեղծների համար։ Վառ ապացույցը Գրիգոր Տղայի «*Ողբ Երուսա-
ղեմի...*» պոեմն է՝ գրված Ե.Շմորհալու «*Ողբ Եդեսիոյ*» պոեմի ազդեցությամբ.

*Երուսաղեմ իցեմ ես հին,
Մայր քաղաքացն Պաղեստին.
Միրտ եմ ծագացս բոլորին*

Եւ ծիր և կէտ մէջ աշխարհին :

Աստվածաշնչում հիշատակվում են *Սաղեմ* և *Սաղիմ* անուններով քաղաքներ /Ծննդ.ԺԴ 18, Ա Թագ.Թ 4, 3ովհ.Թ 23, Եբր. Թ 12/, որոնք մի դեպքում ակնարկել են Երուսաղեմը, մի այլ դեպքում՝ մեկ ուրիշ քաղաք՝ սյուքեմացիների անձանոթ քաղաք Բեթսանիայի հարավում՝ Դորդանանի մոտ: Դայ բանաստեղծները շատ հաճախ գործածել են *Սաղեմ* և *Սաղիմ* անունները, որոնք ակնարկում են Երուսաղեմը: Ն.Շնորհալու «*Ողբ Եղեսիոյի*» մեջ՝ «*Եւ արարին զքեզ զերի, քան զՍաղիմ 'չ այլ աւելի...* » /Էջ40/ ակնարկվում է Երուսաղեմը:

Դովնան անձնանվան տարընթերցումներն են՝ *Դոնան*, *Յոնաս*, *Յովհան*, *Յովնան*, *Յուն*, *Յունան*, որոնք ներկայացնում են միևնույն անվան հնչյունական կամ բարբառային տարբերակներ: Գրաբարալեզու բանաստեղծները գործածում են *Յովնան*, Ֆրիկը՝ *Յուն*, *Յունան*, նոր շրջանում, բնականաբար, *Դովնան*:

Ընդհանրացնելով, կարելի է տարընթերցումները բաժանել հետևյալ խմբերի

✓ ա/ հնչյունական,

Սա մի դեպքում տվյալ անվան պատմական հնչյունափոխության հետևանք է, ինչպես՝ *Սքեսաղոմ-Արիսողոմ*, *Ադամեան-Ադամյան*, *Սքայ-Աքքա*, *Բելոս-Բել*, *Բերսաբի-Բերսաբե*, *Գաղայադ-Գաղաադ*, *Գայիանէ-Գայանե*, *Գեղեովն-Գեղեոն*, *Կայիափայ-Կայիափա*, *Դռաքել-Դաքել*, *Յաբեթ-Դաբեթ*, *Յայէլ-Դայէլ*, *Յովսեփ-Դովսեփ*, *Դռովմ-Դռոմ*, *Յովասափ-Դովասափ*, *Յիսուս-Դիսուս*, *Յաւան-Դավան*, *Յովբ,Յոբ-Դոբ*, *Նոոմի-Նոյեմ*, *Նիկոդաս-Նիկողաս*, *Նինուէ-Նինվե*, *Ներսէս-Ներսես*, *Պօնտեայ ծով-Պոնտա ծով*, *Սաւուդ-Սավուդ*, *Սեմէի-Սեմե*, *Սիդովն-Սիդոն*, *Սիմեոն-Սիմոն*, *Սիւքեմ-Սյուքեմ*, *Սողոմովն-Սողոմոն*, *Սովփերա-Սովեր*, *Տիմոթեոս-Տիմոթեյ*, *Տիւրոս-Տյուրոս*, *Փիսովն-Փիսոն*, *Փյունիկե-Փյունիկա*, *Քութայ-Քութայ* և այլն:

Մի այլ դեպքում սոսկ հնչյունական տարբերակ.որը հաճախ հանդես է գալիս լեզվի ներկա փուլում և դրսևորվում իբրև ներլեզվական տարբերակ, ինչպես՝ *Յաիվե-Եհովա-Եովա*, *Գեհոն-Գեհուն*, *Գալիլեա-Գալիլիա*, *Եղիա-Եղիաս*, *Ենոք-Ենովք*, *Չաքե-Չաքեոս*, *Սիերմոն-Չերմոն* և այլն :

բ/ Բարբառային-հնչյունական, ինչպես՝ *Ադամ-Աթամ*, *Արաբիա-Արաբստան-Արաբիստան-Արապստան*, *Բաբելոն-Բաբիլոն-Պապիլոն*, *Բաղդա-*

սար-Պաղտասար, Բերդեհեմ-Բերդահեմ-Բեթխայի, Գեհեմ-Քեհեմ, Ղալիլա-Տալիլա, Թաբոր-Թափոր-Թաբորական-Թափորական, Թադե-Թադևոս, Թորգոմ-Թորքոմ, Թովմաս-Թովմա, Յափեթ-Յաբեթ, Յիսուս-Իսուս, Յուդա-Ուդա, Յովնան-Յուն-Յունան, Յոռոմ-Յոռոմ, Յովհաննես-Ուվանես-Յոհան-Օհան, Յովսեփ-Յուսեփ-Յոսեփ, Յորդանան-Յորդան, Յորդանիս, Սողոմ-Սոթոմ, Տիգրիս-Տիքրիզ և այլն:

զ/ թարգմանական

Աստվածաշնչի թարգմանությունը կատարվել է ոչ թե եբրայերենից, այլ հունարենի կամ ասորերենի միջոցով, ուստի անունները անմիջականորեն կրում են կամ հունական, կամ ասորական կմիք: Այսպես՝ հունարեն լեզվում բացակայում է շ հնչյունը, ուստի եբրայերեն շ-ի փոխարեն դրվում է ա: Իսկ հայերենում էլ, ինչպես գիտենք, կա և՛ շ, և՛ ս, ուստի Աստվածաշնչի մեջ հանդիպում է և՛ Սամարիա և՛ Շամրին՝ միևնույն անվան հունական և ասորական տարբերակներ: Գործածության այս զուգաձևությունը տեսնում ենք Գ.Նարեկացու մատյանում.

*Չոր Եսայիաս մարգարէ զյանկարծադէպ կատարածն,
որ ի պարսկականն հինից՝
Երուսաղէմի եւ Սամարիայ կործանմանն,
Նմանութեամբ այսր օրինակի կերպաւորեցոյց:*

/Գ.Նարեկացի, ՄՈ, 58/

*...զիա՞րդ յԱբրահամ պարծեցայց՝
խորթացեալս ի գործոց նորին...
Եղբայրըս Շամրնի եւ կամ Գոմորայ...*

/Գ.Նարեկացի, ՄՈ/հ/, 136/

Նույն ձևով՝ Ալեքսանդր-Աղեքսանդր, Բաղդասար-Բալթասար, Բերդեհեմ-Բեթլեհեմ, Իսրայել-Իսրայելո, Սաղիմ-Սալիմ, Լաբան-Ղաբան, Ղազար-Լազար, Քետուրա-Կեն -տուրա և այլն:

Ինչ խոսք, հայ բանաստեղծի համար էական չէ տվյալ անվան ծագումն ու ստուգաբանությունը, և նա ստեղծագործել է առանց այդ մասին մտածելու, բայց հաճախ նրանք հետազոտողին շատ հետաքրքիր գործածություններ են հրամցնում՝ հենց անվան ծագման մասին խիստ ինքնատիպ բնագրային օրինակներով: Ըստ Աստվածաշնչի՝ *Եդեմ* նշանակում է *փափկություն* կամ

զվարճություն, և մեր մեսրոպյան թարգմանիչներն էլ *եղեմի* փոխարեն թարգմանաբար դրել են *Փափկություն* . «*Եւ առ Տէր Աստուած զմարդն զոր արար , եւ եղ զնա ի դրախտին Փափկութեան գործել զնա եւ պահել*» /Ծննդ.Բ 15,16/: Եվ ահա, հայ բանաստեղծության մեջ գտնում ենք մի եզակի գործածություն հենց այդպես՝ *եղեմ* անունը թարգմանաբար: 16-րդ դարի բանաստեղծ Յակոբ Թոխաթցին գրում է .

*Յետ Աղանայ ելանելոյն ի փափկութեան
Որդիք նորա ընդ անասունս աստ բնակեցան,
Ծնան զաւակս ի վերայ երկրի և բազմացան,
Եւ Արարչէն իւրեանց նոքա մոլորեցան :*

/ՈՒՄԲ, հ1, 563/

Աղամ անվան *կապ* նշանակությունն է տալիս Գ.Նարեկացին.

Դու՝ ստեղծիչ, եւ ես՝ կալ...

/ԳՆՄՈ, Բան Բ-Բ, 251/

Բանաստեղծական խոսքում հատուկ անունների գործածության ամենակարևոր և հետաքրքիր կողմը ոճական-իմաստային դաշտն է :

Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք, թե հայ չափածոյում աստվածաշնչյան ի՞նչ անուններ են գործածվել, թե հայ բանաստեղծական մտքի երևակայությանը ի՞նչ լիցք են տվել *Աղամ* ու *Եվա*, *Կայեն* ու *Արել*, *Նոյ*, *Մովսես* ու *Սիարոն*, *Արարատ*, *Գողգոթա*, *Երուսաղեմ* և այլ բազմաթիվ անուններ: Երբևէ մտածել կամ պատկերացրե՞լ եք, թե հայ բանաստեղծի համար ինչ ասել է *Հիսուս* , *Սարիամ* : Յուրաքանչյուրիս քաջածանոթ այս անունների կողքին չափածոյում սփռված են հարյուրավոր անհայտ ու անծանոթ անուններ՝ *Աբիրոն*, *Բահաղ*, *Բեթեզդա*, *Գեհուն*, *Իսաքար*, *Ծուր*, *Ծայդան*, *Երիքովի*, *Սողոք*, *Նադաբ*, *Ռորովամ*, *Սեգովր*, *Քասայի*, *Քերրոն* : Սրանց և էլի հարյուրավոր անունների գործածությունը հայ բանաստեղծների կողմից բնավ պատահական չէ: Ի՞նչ գիտե ընթերցողը այդ անունների մասին: Բանաստեղծական որոշ ժողովածուների վերջում երբեմն ընթերցողին են հրամցվում ընդամենը գործածված անձնանունների ու տեղանունների ցանկեր: Մինչդեռ այդ անուններից յուրաքանչյուրը բացատրման ու մեկնաբանման լուրջ կարիք ունի: Անվան մանրամասն բացատրությունը, այդ անունը կրող անձի մասին քաջատեղյակությունն են միայն օգնում զգալու բանաստեղծության ներքին

բովանդակությունը: Այսպես՝ եթե ընթերցողը չի կարդացել Աստվածաշնչի մարգարեությունները՝ ըստ եղիայի, եզեկիելի, Եսայու, ողբերը՝ Երեմիայի, Դանիելի, Դովելի և այլոց, չգիտե՝ ով է Դոբը և ինչի մասին է գրել, անշուշտ չի հասկանա մարեկացիական խոսքերի իմաստը՝ «*Լուսավորությանը քո ճշմարտելով առական Եսայու...*», «*Ինչպես Մովսեսն է հանդիմանաբար ասել առականվ...*», «*Ըստ Դոբի խոսքի՝ գնացի անդարծ մի ճանապարհով...*», «*Մեծն Դանիելի խոսքի համածայն...*», «*Ըստ Երեմիայի՝ ինքս իմ ձեռքով անկարկատելի մի գոգնոց դարծա...*»⁴:

Եթե ընթերցողը ուշադրություն չի դարձրել մեր «ամենամահավատ» բանաստեղծի՝ Եղիշե Զարենցի ստեղծագործության մեջ հանդիպող հատուկ անուններին ընդհանրապես և մասնավորապես աստվածաշնչյան անուններին, ապա երբեք չի կարող լիարժեք զգալ հոգու այն մեծ ողբերգությունը, որ ապրեց նա կյանքի վերջին երկու տարիներին: 400-ից ավելի հատուկ անուն գործածած բանաստեղծի անունների ցանկում աստվածաշնչյան անունները մեկ տասնյակի էլ չեն հասնում՝ *Գողգոթա՛մ!*, *Բալթազար, Ղազար, Ղովտ, Դուդա, Եսավ* և *Դիսուս* 16/: Ինչու՞ այսքան քիչ: Մտածել, թե Զարենցը ծանոթ չէր Աստվածաշնչին, երբեք չի կարելի: Դեռևս 1916-17 թթ-ին գրած «Ծիածան» շարքում կարդում ենք.

*Այնքան տրտում է հոգիս, բայց միշտ ժպտում է հոգուդ,
Որ երազը չդառնա Գողգոթայի ճանապարհ...*

/ԵԶԱԵ, 46/

Ուրեմն՝ Զարենցը քաջածանոթ էր Աստվածաշնչին և ուներ առանձնահատուկ վերաբերմունք, որը բխում էր նրա ընդհանուր աշխարհայացքից: 1933թ-ին գրած «Համայնական դաշտերի սերմնացան» պոեմում կարդում ենք.

*Քաղաքներից եկավ
Հեռու հյուսիսի,
Դեն շարտեց չարկամ
Հիմար Դիսուսին,
Եվ Դիսուսի հետ այն
Սգլած ու դեղին-*

⁴ Օրինակները բերվում են Գ.Նարեկացու *Մատյան ողբերգության* պոեմից՝ Վազգեն Գևորգյանի թարգմանությամբ:

*Նա դաշտերից քշեց
Ոսոխներին հողի :
/ԵԶԵ, 4, 288/*

Հավատա՞նք: Արդյոք այդպես՝ *հիմա՞ր, չարկա՞ն, մզլա՞ծ, դեղի՞ն*
ընկալվեց ու մնաց Հիսուսը Չարենցի համար: «Ամտիպ երկերի» «Վերջին
աղոթք» բանաստեղծության մեջ /գրված 1936թ-ին/ Չարենցը խոստովանում է ,
փորձում ապաշխարել.

*Չե՞ն գարմանում, Տեր իմ, որ ես դիմում եմ քեզ...
ես՝ բանաստեղծս անահ և մարտնչողս արի,
Յուրաքանչյուր նյարդով կապված այս վեհ դարին...
Տարօրինակ է, չէ՞, որ ես դիմում եմ քեզ.
Բայց ես դիմում եմ քեզ, ինչպես հաճախ
Անապատում ահեղ սամումների ժամին,
Քարավանի տերերն արնաշաղախ...
Թողած այնքան ուշիմ ու խորամիտ
Փորձառությունն իրենց լոկ ուղտերի դեղին
Բնազդին եմ կառչում ու գտնում եմ ուղի...*

/ԵԶԱԵ, 326/

Շարունակենք հետևել բանաստեղծի մտքին. «Ի խորոց սրտի խոսք
ընդ Աստծու» շարքի «Տետրապտիքոսում» կարդում ենք.

*եվ ես դիմում եմ քեզ, ո՛վ Արարիչ, դարձյալ,
Ինչպես վկան մեր հին՝ Նարեկացին,-
Քանզի կարոտ ոգու և անարյուն հացի,-
Տեսնում եմ լոկ Կացին արեգնացյալ:
եվ ես տխուր, ինչպես վկան Նարեկացի՝
ե՛վ զարհուրյալ այնպես, և՛ մենակյաց՝
Ջարհուրելի կյանքի հանդեպ անօգ կանգնած՝
ես ու՞ն դիմեմ, ո՛վ Տեր, արդ, քեզանից բացի:*

/ԵԶԱԵ, 327/

Ճշմարիտ ուղու որոնման քառուղիներում բեկվում է բանաստեղծի
հոգին, յուրատեսակ դարձ ապրում: Նույն՝ 1936թ-ին գրած «Սոմետ անկշռելի»
բանաստեղծության մեջ հեղինակը փորձում է գտնել կորած այդ ուղին.

*Իբրև Հիսու՞ն ես դու արդյոք լյառ բարձրանում,
Թե՞ ավազակ ես լոկ դու մահապարտ...*

էլ ի՞նչ պսակ լուսն- էլ Գողգոթա
Ինչպե՞ս ելնես, հոգիս, չարչարանքով հոժար-
երբ չգիտես ինքդ էլ՝ Դիսու՞ն ես, թե Դուդա...

/ԵԶԱԵ՝330/

Ի վերջո՞...Ի վերջո հաղթում է հավատը.

Շնորհակալ եմ, Տե՛ր, այն ամենի համար,
Որ տվեցիր դու ինձ կյանքում իմ խեղճ...

/ԵԶԱԵ,334/

Եվ իզուր չէ, որ «Կոմիտասի հիշատակին» ստեղծագործության մեջ
բանաստեղծի համար Դիսուսը ոչ միայն ընկալված է , այլև՝ մերացված.

Ճգնավորի դեմքով ծեր,
Մարտիրոսի դեմքով սուրբ,
Օ՛, ուրվական դու վսեմ,

Թափառական մեր Դիսուս... /ԵԶԱԵ,340/

Դետագայում Պարույր Սևակը Դիսուսին կտա քաղաքական դիմագիծ.

Դիսուսը , որ մի հրեա էր ազնիվ,
Արդեն շատ վաղուց դարձել էր իրոք
Մի բյուզանդացի՝ խորամանկ ու նենգ...

/ՊՍԵժ,4,250/

Դիսուսից դառնացած, Դիսուսից խաբված,բայց էլի Դիսուսից փրկու-
թյուն հայցող մեր բանաստեղծների համար ժողովրդի ու Դիսուսի ճակատա-
գիրը նույնն են.

Ազգ, որ առաջինը ինքը ընդունեց
Դիսուսի լույսը և թագադրեց
Իր բիրլիական Մասիսի գլուխն Դիսուսի թագով,
Ինքն էլ դարեցդար խաչվեց արմաքամ
Իր ոգելույսի՝ Դիսուսի նման:

/ԲՇԴԴ,64/

Ուրեմն՝ բոլոր ժամանակներում էլ մեր բանաստեղծները խոր
պատկառանք են տածել Աստվածաշնչի համդեպ, սնունդ են ստացել նրանից,
ոգեշնչվել. ահա թե ինչու բանաստեղծական լեզվի ամուլների քննությունը
ունի խիստ կարևոր նշանակություն: Իսկ քննությունը, ամշուշտ, պետք է սկսել
ամենասկզբից՝ Աստվածաշնչից:

Հրեական ժողովրդի հնագույն գրական ստեղծագործությունը հանդիսացող Աստվածաշունչը հունարեն կոչվել է *Քիբլիա* և հայերեն թարգմանվել է *Գիրք*։ Մ.թ.ա. 5-րդ դարում, հավանաբար այլ գրքերից տարբերելու և նրա կարևորությունը շեշտելու համար, սկսում են կոչել *Սուրբ Գիրք*։ Հայկական մատենագրության մեջ առաջին անգամ *Գիրք* անունը գրերի գյուտից հետո գործածում է Կորյունը. «*Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի*»⁵։

Աստվածաշունչ անունը հունարեն *theopneustos* բառի համարժեքն է և կապվում է Հին կտակարանի հունարեն թարգմանության հետ⁶։ Պտղոմեոս Ֆիլադելֆոս/Եղբայրասեր/ թագավորի/234-247թթ./ համծնարարությամբ 72 թարգմանիչներ հրավիրվում են Ալեքսանդրիա և, բաժանվելով 6 խմբի, թարգմանում են Հին կտակարանը։ Երբ ավարտից հետո համեմատվում են բոլոր թարգմանությունները, բացառապես ոչ մի բառի տարբերություն չի լինում, ուստի կարծվում է, թե այդ ամենը կատարվել է Աստծու շնչով։ Հետագայում թարգմանիչներն ու արտագրող գրիչները վերնագրում են «*Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր կտակարանաց*» կամ ուղղակի *Աստուածաշունչ*։ Փաստորեն *աստվածաշունչ*-ը նախապես մակդիր էր Հին կտակարանի, որ հետո վերագրվեց նաև Նոր կտակարանին ու դրանց մեջ մտնող բոլոր գրքերին։ «*Կատարելության հասցնող «ճշմարտութեան խօսքը» Աստուածաշունչ Կտակարաններն են, պահուած և փոխանցուած սերնդէ սերունդ, նախ բերանացի աւանդութեամբ և ապա գրաւոր, վերջ ի վերջո ամփոփուելու համար Գիրքին մէջ, որ է Սուրբ, որովհետեւ անոր հեղինակներուն գրիչը շարժած է Աստուծոյ շնչով*»⁷։

Աստվածաշունչը առաջին անգամ հայերեն թարգմանվել է հայոց այբուբենի ստեղծումից անմիջապես հետո՝ 409-410 թթ-ին, և դարձել հայ թարգմանական գոհարներից մեկը։ Ըստ Լեոյի բնութագրման՝ Աստվածաշունչը

⁵ Տե՛ս Կորյուն, *Վարք Մաշտոցի*, Երևան, 1941թ., էջ 231։

⁶ Թարգմանությունը հայերեն կոչվում է *Յոթանասնից* /հունարեն *Նեպտուագինտա* /։

⁷ *Յուզակ Աստուածաշունչ մատենի հայերէն ձեռագիրներուն*, Ըաիէ արք. Աճեմեան, Լիսաբոն, 1992թ., էջ 6։

«դարձավ մի հոյակապ և ամուր պատվանդան, որի վրա հաստատվում էր հայոց գրականության սքանչելի շենքը»⁸:

Աստվածաշնչում առանձնացվում են ամբողջական բանաստեղծությունների գրքեր: Այդպիսիք են համարվում *Յոթի գիրքը*, որը չափածո պոեմ է՝ չարի ու տառապանքի, համբերության, արդարության ու Աստծու ողորմածության մասին, *Սաղմոսների գիրքը*, որը ժամերգությունների և անհատական բարենադառնությունների՝ աղոթքների ժամանակ օգտագործվող 150 օրհներգեր են՝ նվիրված Եհովա աստծուն, բարոյական ու կրոնական երգեր, նաև պատմական-եղերական բնույթի երգեր, *Սոսկացը*, որի էությունը Աստծու հանդեպ վախ ունենալն է, *Ժողովողը*, որի հիմնական միտքն այն է, որ Աստծու հանդեպ ունեցած վախից և նրա պատվիրանները կատարելուց զատ ամեն ինչ ունայն է, և, վերջապես, *Երգ երգոցը*, որը այլաբանական, սիրային երգերի հավաքածու է:

Ուրեմն՝ Աստվածաշունչը թերևս առաջին բանաստեղծությունն է .

«Եւ ասաց Աստուած,

Եղիցի լոյս. եւ եղել լոյս:

Եւ ետես Աստուած

գլոյսն զի բարի է .

Եւ մեկնեաց Աստուած

ի մէջ լուսոյն

Եւ ի մէջ խաւարին:

Եւ կոչեաց Աստուած

գլոյսն Տիւ,

եւ զխաւարն

կոչեաց Գիշեր.

Եւ եղել երեկոյ

Եւ եղել վաղորդայն, օր մի »:

/Ծննդ.Ա 3-5/

Ահա այս տեսանկյունից՝ մոտենալով՝ անշուշտ Աստվածաշունչը համաշխարհային գրականության գլուխգործոցներից է, եթե ոչ առաջին գլուխգործոցը, որն իր այնքան հարուստ բովանդակությամբ, միս ու արյուն ունեցող կերպարներով, նրանց ճակատագրով ու պատմությամբ ծագել է

⁸ Լեո, Երկերի ժողովածու, հ.2, էջ18:

այնքա՛ն հեռավոր անցյալում և հասել է մեզ. մի գլուխգործոց, ուր միախլուս-ված են երկնայինն ու երկրայինը, պատմությունն ու առասպելը:

Իսկ որքա՛ն գունագեղ է Աստվածաշնչի կերպարների պատկերա-սրահը: Բարձունքում՝ երկնային գահին, եհովան է, մախաստեղծ էակներ Ադամն ու Եվան, Կայենն ու Աբելը, Նոյն ու իր զավակները: Չհիշատակե՞նք Աբրա-համին, Մովսեսին, Յեսուին, Սամսոնին՝ մոլորված ու կիսախելագար, միայնակ թագավոր Սալուդին, նրբաճաշակ Սողոմոնին, հայրենասեր Դերովրային, աստվածախոս Դավթին, դժբախտ Յեփիթային... Կերպարների առատությանը բնավ չեն զիջում աշխարհագրական վայրերը, որ սկիզբ են առնում աստվա-ծաշնչյան Եդեմով, ծավալվում՝ ընդգրկելով պետություններ ու քաղաքներ, գետեր ու լեռներ, որտեղ, սակայն, պետությունը սովորական պետություն չէ, այլ՝ Ավետյաց երկիր, գետն ու լեռն էլ՝ ոչ թե սովորական, այլ՝ սրբազան:

Եվ ահա, ազգայինն ու համամարդկայինը խաչաձևող մեր բանաստեղ-ծությունը իր արժատներով հասնում է մինչև Աստվածաշունչ:

Հայ հին և միջնադարյան հոգևոր բանաստեղծությունը խիստ կրում է Աստվածաշնչի ազդեցությունը թե՛ բովանդակության, թե՛ պատկերավորման առումով: Գողթան երգերի կողքին, Վիշապաքաղ Վահագնին, Արտաշեսին, Սաթենիկին մվիրված երգերի կողքին բանաստեղծության հերոս են դառնում աստվածաշնչյան կերպարները: Ստեղծվում են աստվածաշնչյան թեմաներով գրված մի շարք գեղարվեստական գործեր՝ Գրիգոր Մագիստրոսի «*Հազար-տողեան*» կամ «*Առ Մանուչէ*», Գրիգոր Նարեկացու «*Մատեան ողբերգութեան*», Ներսես Շնորհալու «*Յիսուս որդի*», Առաքել Սյունեցու «*Ադամգիրք*» և բազում այլ գործեր: Սաղմոսների բարերար ազդեցությամբ ծնունդ է առնում շարա-կանաբերությունը, իսկ «*Շարակնոցը*» դառնում է հայ հոգևոր բանաստեղծու-թյան մի յուրօրինակ ընտրանի, որի մասին «*Յաղագս սրբազան բանաս-տեղծութեան*» հողվածում կարդում ենք. «*Ապա ուրեմն իրաւացի է պարծել ՚ի շարականսն մեր իբրեւ ՚ի սրբազան բանաստեղծութիւն, յորում ոչ Յոյնք եւ ոչ Լատինք գերազանցեալք քան զմերս*»⁹: Շարակնոցում արդեն փառաբանվում

⁹ Տե՛ս *Յաղագս սրբազան բանաստեղծութեան*, Բանասեր, ԿՊՕԽ, 1851, էջ 429:

են Հովակիմն ու Աննան, Մարիամն ու Հիսուսը, Թադևոսն ու Սանդուխտը և էլի շատ ու շատ անձեր :

Առաջանում են հոգևոր երգի ամենատարբեր տեսակներ՝ կանոն, կցուրդ, փոխ, զանձարան, և շարականից զանձարան, զանձարանից բանաստեղծություն փոխանցվում են աստվածաշնչյան անունները: Իսկ դա միանգամայն բնական է. վանական միջավայրում կրթություն ստացած մեր միջնադարյան բանաստեղծների համար ներշնչանքի հիմնական աղբյուրը Սուրբ գիրքն է և նրա նշանավոր անձերը:

Սակայն երբեք չի կարելի մտածել, որ աստվածաշնչյան թեմաներով հագեցած հին և միջնադարյան բանաստեղծության մեջ հանդիպող անունները գործածվել են սոսկ ուղիղ իմաստով, զուրկ են ոճական արժեքից: Դրանք հանդես են գալիս ոճական բազում հնարանքներով. միևնույն անունը, ուղիղ իմաստից զատ, ձեռք է բերում փոխաբերական իմաստ, ակնարկում այլ անձանց /Աղա՛մ-Հիսուս, Եվա-Մարիամ, Աբել-ընդհանրապես անմեղ զոհ, Կայեն-եղբայրասպան, Մաև՝ կայեն ազգ, Հուդա-դավաճան և այլն/, գործածված անունները դառնում են ինքնատիպ համեմատությունների հիմք, հանդես են գալիս ոճական հոգնակի ձևեր, շրջասություններ, տեղանունները շնչավորվում են, անձնավորվում: Ասվածի պարզ վկայության մի փոքրիկ օրինակ է Խ.Կեչառեցու «Վասն կանանց» տաղի հետևյալ հատվածը.

Արմատ Կայենի եք դուք,

Որ կորոյս զաշխարհն ի բնէ.

Քոյր եզաբելի եք դուք,

Որ վարեց զտեսողն ի տանէ.

Դուստր Հերովդէի եք դուք,

Որ խոցեց զծայնն յանապատ...

Ընդգծված անունները ոճական համդերձանքի մեջ են. դրանք գործածվել են փոխաբերաբար, դարձել շրջասություն՝ հիմքում ունենալով աստվածաշնչյան ընկալումը:

Ինքը՝ Աստվածաշունչը, ներշնչանքի անսպառ աղբյուր է մեր բանաստեղծների համար, որոնք իրենց ստեղծագործություններում հիշատակում են այն՝ ամենատարբեր նկատառումներով՝ գործածելով *Աստվածաշունչ, Գիրք,*

Սուրբ գիրք անվանումները ընդ որում , Աստվածաշունչը գործածվում է և՛ անվանողական , և՛ մակդրային արժեքով:

Գ.Նարեկացու մատյանում *աստվածաշունչ*-ը օգտագործված է մակդրային նշանակությամբ.

*Չաւրացո՛ղբանս զղջման՝ առաքեալ ի մեզ
զՅոզի ի բարձանց,
աստուածաշունչ պատգամաւքս ի սմին եղելոցս...*

ԴՅՆԱՌ,251/

Իբրև վերնագիր՝ Նարեկացին գործածում է *Գիրք* անվանումը.

*Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ ի մահ
Ոչ կացի երբէք ի յոտս մարդոյ
Եւ ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ Գրոյն:*

ԴՅՆԱՌ,324/

Առաքել Սյունեցին նախընտրում է և՛ Աստվածաշունչը, և՛ Սուրբ գիրքը: Ընդ որում՝ Ա.Սյունեցին «Քերթուածներում»ներկայացրել է ողջ Աստվածաշնչի կառուցվածքը.

*Առաքել դիտող Սիւնեաց,
Չուրկ եւ թափուր յամէն շնորհաց
Շարադրեցի ըզկարգս գրանաց,
ՉԱստուածաշունչ կտակարանաց:*

ԴԱՍ,Բ,193/

Ուշ միջնադարի մեր բանաստեղծներից *Աստվածաշունչ* անունն են գործածում Մ.Դերջանցին, Սուքիասը, Ե.Ղափանցին :

Հին և միջնադարյան բանաստեղծության մեջ սոսկ անվանողական արժեք ունեցող *Սուրբ գիրքը* նոր շրջանում ձեռք է բերում նաև ոճական արժեք.

Դու Սուրբ գրքի պես աշխարհապատկան...

ԴԱԳԱՅ,165/

Քիբլիա անվանումը ընդհանրապես հայ բանաստեղծության մեջ չի գործածվում, մինչդեռ նույն անունից բաղադրված *Քիբլիականը* գործածության հաճախականությամբ գերազանցում է *սուրբգրային* ձևին և չի զիջում *աստվածաշնչյան*-ին.

Ես հայ եմ, հին, ինչպես լյառն այս քիբլիական...

ԴԳԵԵԺԱ,45/

*Ան, բիրյիական քո աչքերով տեսնող,
Դարեր չհոգնած, որոնող հոգի...*

/ՍԿԳՄՂ,24/

Հայ բանաստեղծության մեջ հաճախական գործածություն ունի նաև *Ավետարան* անվանումը՝ և՛ ուղիղ, և՛ փոխաբերական նշանակությամբ: Հաճախական գործածությունը միանգամայն բնական է, քանի որ յուրաքանչյուր հայ քրիստոնյայի համար մեծ է Ավետարանի խորհուրդը, այն, որ Քրիստոսն է փրկությունն աշխարհի, հոգևոր սնունդը, կյանքն ու ճշմարիտ ճանապարհը: Չմոռանանք, որ Ավետարանի դերի և արժեքի մասին կարդում ենք հենց իրենց բնագրերում. «Աստուծոյ շնորհաց աւետարան»/ Գործ. Ի 24/, «...փառաւոր...յաւիտենական աւետարան կամ աւետիք »/ Ա Տիմ.Ա11,Հայտ.ԺԴ 6/, «Եւ արքայութեան այս աւետարանը բոլոր տիեզերքումը կքարոզուի ամեն հեթանոսներին վկայութիւն լինելու համար...»/Մատթ.ԻԴ 14/: Այս գնահատականների յուրատեսակ շարունակությունն են հայ բանաստեղծների չափածո արձագանքները.

*Վասըն որոյ և քառիցն Աւետարանին գետք,
Ջանուշն և զօգտակարն,
Արբուցանելով զպասքումն ծարաւեաց...*

/Ս.Խորենացի,ԳՀԲ,46/

*Սիաբանիլն է անմման,
մՁէտ չորս գլուխ Աւետարան,
Ձոր ետ Քրիստոս մեզ պահապան,
Հոգւոյ, մարմնոյ պատսպարան:*

/ԵՂափանցի,ՈԻՄԲ,հ2,570/

*Հայոց գեղջուկի ծավալուն արտեր,
Ավետարանի էջերի նման խնկաբույր,
Օծու՜ն, հավերժ սրբազան...*

/Ավ.Իսահակյան,Ե,156/